

**ՅՈՎՍԵՓ ՃԻՍԿՈՋԱ**

**ԻՆՉՊԷՍ ՏԵՐԵԻՆԵՐԸ**

ԿԱՏԱԿԵՐՈՒԹԻՒՆ ՉՈՐՍ ՀԱՆՊԻՍՈՎ

(Շար. սես էջ 186)

**ՀԱՆԳՐԵՍ ԵՐԿՐՈՐԳ**

Սենեակ պարզ, բայց ոչ խեղճ, և ոչ բուրբօրն անզարդ: Փիչ բարձր: Ձեղրուն փայտէ, պատեր փայտէ: Հանդիսատեսին ձախակողմի պատին մէջ՝ մեծ պատուհան մը. շատ աւելի լայն քան թէ բարձր: Պէտք է որ փեղկերը կարենան բացուիլ և քցուիլ: Գուրաք, մասաւոր ծառեր: Խորը, երկու ղուներ: Ձախակողմեանը կը հանէ պզտիկ նախասենեկի մը մէջ և անկէ սանգուղը: Մայր դռան է: Ձախակողմեանը կը հանէ Յուլիայի սենեակը: Ասոնց միջև, պատին յեցած, փայտէ դարան մը՝ վրան խեցեղէններով: Հանդիսատեսին շախակողմի պատին մէջ, առաջին կողմանոցին բարձրութեամբ, դուռ որ կը տանի Նէնէլէի սենեակը: Աոր և խորքին միջև, ստուղի մը՝ պատին կոթընած: Սենեկին մէջտեղ, կլոր ստուղ մը՝ զորով մը ծածկուած: Գալարուն փայտէ ընկողմանիկ աթոռ մը՝ պատուհանին մօտ: Փայտէ աթոռներ:

**ՏԵՍԻՆ ԱՌԱՋԻՆ**

Նենեկէ մէջտեղի ստուղն զիմացը կը կարգայ նստած: ԹՈՒՐ, պատուհանին մօտ աթոռի մը վրայ հեծելաձեւ, կը ծխէ փայտէ անզրիւկան կարճ ծխափող մը: ՅՈՎՀԱՆՆԵՍ մայր ղունէն կը մանայ:

Նենեկէ: ՅՈՎՀԱՆՆԵՍ

Հայր: Նենեկէ

Երէկ իրիկուն ինծմէ՝ ստակ ուզեցիր, աշակեր էի գեղի որ ինծի յիշեցնես այս առաւօտ:

Նենեկէ  
Ճամարիտ է: Ձի համարձակեցայ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ինչու: Հիմա միտքս եկաւ և վեր ելայ որ բերեմ:

Կու տայ իրեն դրամեր,  
Նենեկէ

Շատ են:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Հարիւր ֆրանք: Մինչև ամսոյն վերջը կ'ունենաս:

Նենեկէ

Լաւագոյն կը համարեմ գիշ գիշ ատեն ատեն:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Մեծ դուստր:

Նենեկէ

Ձէ, սակայն . . . վերջիններէն որ ինծի տուիր, կը պակսին երեսուն ֆրանք:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կը պակսե՞ն . . .

Նենեկէ

Հաշիւներս ընկողմ պէտք էր մնացած ըլլար երեսուն ֆրանք և զանոնք չեմ գտնար:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Մոռցած պիտի ըլլաս հաշուի մաս մը նշանակելու:

Նենեկէ

Պէտք է այնպէս ըսել, թէպէտ և կրկին մտածելով վրան . . . կամ զանոնք կորսընցուցած պիտի ըլլամ . . . Ինչ որ ալ ըլլայ՝ լաւագոյն կը սեպեմ աւելի ստեպ քեզմէ ուզելու: Աս: Երկու ոսկի ունիմ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Պահէ, ամբողջ պահէ: Պէտք է սորվիլ, թո՞մի:

Կը ձանձրանաս է՛, խեղճ թո՞մի:

ԹՈՒՐ

Անշուշտ, այս բանի պարագայդու՞թեամբ:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Համբերութիւն կ'ուզէ:

ԹՈՒՐ

Դու աղուոր աղուոր կ'ըսես ինծի, դու որ օրն ի րուն զրաղած ես:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Կը գտնանք, կը գտնանք:

Կը սկսի երթալ:

Նենեկէ

Վա՞ր կ'իջնաս: Նայէ, չորս օր կ'ըլլայ որ տունէն դուրս չես ելլար:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Գործ ունիմ:

Նենեկէ

Եւ յոգնած կերպարանք ունիս:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ոչ: Առիկայ չէ: Երբեք այնպէս աղէկ չէի եղած ինչպէս՝ Հոս ըլլալնէս ետքը՝ այս երեք ամիսներուս մէջ: Ահ, այսօր Հինգշաբթի է: Մաքսմոս կու գայ:

ԹՈՄԻ յափրացողի մը ձայնով:

Այո՛:

ՅՈՎՀԱՆՆԵՍ

Ուրեմն, կ'երթամ յետոյ այս իրիկուն՝ երբոր դարձեալ մեկնի՝ ընկերելու հետը կույսարանը: Գո՛հ ես:

ՆԵՆՆԵԼԷ

Աղէկ է:

Տ Ե Ս Ի Լ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

ՆԵՆՆԵԼԷ և ԹՈՄԻ

ԹՈՄԻ

Յայտնի է թէ իրեն համար բան մը փոխուած չէ: Կամ աւելի լաւի փոխուած է: Միշտն կ'աշխատէր, Հոս կ'աշխատի: Գլուխ ցաւցող մը չկայ: Ընդարձակ գիւղի լաւ օդ: Իննիս անկողին կ'երթայ: Կը քնանայ: Ի՞նչ կ'ընես:

ՆԵՆՆԵԼԷ

Կը սորվում:

ԹՈՄԻ

Ուրիշ կողմանէ, Հարիւր Հազար Ֆրանք եկամուտ և եղած սեղերնիս՝ անգղիական ամարանոց մը, փոխանակ այս լալահառաջ տնակին, այն ատեն ես ալ աւելի բան մը չէի խնդրեր երկընքն և երկրիս ստեղծողէն:

ՆԵՆՆԵԼԷ

Տունը Բ՞նչ նշանակութիւն ունի, երբոր գեղեցկութիւնը պատուհաններէն դուրս ըլլայ:

ԹՈՄԻ

Պէտք է պեղեցկութիւնը պճնազարգել: Բնութիւնը թերակատար արուեստագէտ մըն է: Եթէ ինձ մտար, կ'ուզէի Հոս վարք պարտէջ մը՝ անպողարքի մեծ ծառերով: Եւ խտրը միշտ կտրուած: Եւ ծառերու բուններուն մէջ ամայի մենարան մը: Եւ չի տեսնալ մայրս Հարթավայրին ճիւղ մէջտեղը, անարգ եռտանիին վրայ նստած, պատկերակալը առջեւը, ուշադիր իրերուն գեղեցկութիւնը աղարտելու:

ՆԵՆՆԵԼԷ

Դեռ նկարելու վրայ է:

ԹՈՄԻ

Անայլայլակ: Այս ժամուս արդէն իր բամ-

բակէ յիսներորդ Սպիտակ Լեւը՝ սկսեր է թրմելու անխառնի յիսներորդ լճին մէջ:

ՆԵՆՆԵԼԷ

Մայրս մինա՞յ է:

ԹՈՄԻ

Բայց կը կարծես: Երկու եղբայրակից աւուեստագէտներու հետ է: Très honorés maîtresներ, Միեմանեծ ոճերները առանց մեղսակցի չեն գործուիր: Սակայն Սպիտակ Լեւը ըրածներնուն հոգ չըներ և աշանելու կերպարանքը չունի: Սվոնց նայէ: Կարծես թէ երբն ալ մեքենայէս լարուած են: Գլուխնին վեր կ'առնեն՝ կտուց մը կերակուրին սպասող ճնճուկներու նման, կը պարուրեն աչքերնուն մէջ իրենց դաշտանկարի կտորը և կ'աճապարեն անճանաչելի ընելու զայն կտաւին վրայ: Այն երկուքը մօտէն տեսած ես երբեք:

ՆԵՆՆԵԼԷ

Մէկը այո՛: Այն ծերուկը: Երբեմն Հոս կու գայ:

ԹՈՄԻ

Կը զրկեն զինքը: Ատեն տտեն մեր Հնարագէտ մօրուն կ'անդրադառնայ թէ տունը գոյնի խողովակ մը, վրձին մը, հալվահարը մոռցիր է, և միշտ ծերը կը վազէ: Բնաւ այն երիտասարդը չի շարժիր: Եւ այն ատեն նկարչական եռաձայնը կը փոխուի հայեցողական երկձայնիկի:

ՆԵՆՆԵԼԷ

Ի՞նչպէս կ'ուս ես: Ի՞նչ ունիս:

ԹՈՄԻ

Ոչինչ:

ՆԵՆՆԵԼԷ

Ի՞նչ զգուսանք սակայն:

ԹՈՄԻ

Ո՞ր ատեն անդրադարձար այն դրամին գործը:

ՆԵՆՆԵԼԷ

Ի՞նչ դրամ:

ԹՈՄԻ

Երեսուն Ֆրանքը որ քօփէդ կը պակտի:

ՆԵՆՆԵԼԷ

Անցած օր:

ԹՈՄԻ

Ո՞ր կը պահես:

ՆԵՆՆԵԼԷ

Հոն, սառիկին գգրոցին մէջ:

ԹՈՄԻ

Անշուշտ չես կարծեր որ տեղեկութիւն կ'առնեմ օգուտ քաղելու համար:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ թոմի:

ԹՈՄԻ Թեթեւ վարանու՛մէ մը ետքը:  
Պէտք եղած ժամանակը քեզմէ կ'ուզեմ:

ՆԵՆՆԵԼԷ

Կ'ուզե՛ս:

ԹՈՄԻ

Խեղճ Նէննէլէ:

ՆԵՆՆԵԼԷ

Բայց արդէն դու քուկինդ ունէիր:

ԹՈՄԻ

Անցեայ ժամանակ: Մերձուոր անցեալ:  
Բայց անցեալ:

ՆԵՆՆԵԼԷ

Քիչ բան կրնամ սալ: Կ'ուզե՛ս: Մնացաւ  
ծին վրայ կծծութիւն կ'ընեմ:

Գարօք բանալու կ'ըլլու:

ԹՈՄԻ փորձութեան յաղթելով:

Փակէ, փակէ: Եւ բանալիով միշտ գոց  
պահէ: Պէտք չէ մարդիկը փորձութեան մէջ  
ձգել: Արուեստագէտները տկար են:

Կ'անհարգէ պատուանե՛ն դուրս:

ՆԵՆՆԵԼԷ

Գէշ մի մտածեր: Համոզուած ես, ըսէ, որ  
արդեօք հայրս մէկ կողմ դրած չէր:

ԹՈՄԻ

Գուցէ: Այնպէս կ'երեւանայ:

ՆԵՆՆԵԼԷ

Կը ցախն:

ԹՈՄԻ

Երեւակայէ:

ՆԵՆՆԵԼԷ

Եւ հիմա մտիկ ըրէ ինծի:

ԹՈՄԻ

Ի՞նչ բան:

ՆԵՆՆԵԼԷ

Թէ արդեօք սորվեցայ: Արդեօք գիտեմ:  
Ա:

Գերք մը հու սայ իրեն:

Այգերովդ հետեւէ առանց հարցփորձ ը-  
նելու: Ապէ՛ սկսէ: Յօգը:

ԹՈՄԻ

Յօգը: Դու այսպիսի բաներ կը սորվես:

ՆԵՆՆԵԼԷ

Պիտի սորվեցնեմ, չեմ գիտեր:

ԹՈՄԻ

Չե՛ս գիտեր ինչ բան է՝ յօգը:

ՆԵՆՆԵԼԷ

Առաջ տար, դու ըսէ:

ԹՈՄԻ

La, il,

ՆԵՆՆԵԼԷ

Գիտես թէ այն բառերը յօգեր են: Բայց  
չես կրնար բռն ինձի անմխայէս արձակ  
համարձակ թէ ինչ բան է յօգը: Եւ թիբեւս  
ալ տսիկայ կարելի է - բայց մտկայար, ձայ-  
նարկութիւնը: Ահ:

ԹՈՄԻ

Տեսնանք:

ՆԵՆՆԵԼԷ

Յօգը բառ մըն է որ կրնայ հոլովուի:

ԹՈՄԻ

Հօլովիլի, կ'ըսէ:

ՆԵՆՆԵԼԷ

Բայց դուս ըսելու ելած չեմ. չեմ ուզեր  
զուրքել դրածին պէս: Գիտութեանս վրայ  
կ'ուզեմ տպահով ըլլալ: Բառ մըն է որ կրնայ  
հոլովուիլ, որ երբոր դրուի անունի մը դի-  
մաց կը նշանակէ, կ'որոշէ... այո, վերջաւ  
պէս կը նշանակէ թէ այս տրական է կամ  
իզական, եզակի կամ յոյնակի: Օրինակի  
համար, il pero (տանձնե՛ր) և la mela  
(խնձոր): Il արական սեռի յօգ է, վասն զի  
pero արական է:

ՏԵՍԻԼ ԵՐՐՈՐԴ

ՄԱՔՍԻՄՈՍ և ՎԵՐՈՅԷԿԱՆԷՐԸ:

ՄԱՔՍԻՄՈՍ կը մտնայ խորէն, առաջին ախ-  
ոխն վրայ կողովիկ մը կը գնէ, և առանց տես-  
նուելու երկուքէն՝ կը կենայ մտիկ ընելու:

ՆԵՆՆԵԼԷ շարունակելով:

Եւ la սեռի յօգ է...

ԹՈՄԻ

Սեռ՝ շըտուիր, տեսակ կ'ըսուի: Սեռ գէշ  
տեսակ բառ մըն է:

ՆԵՆՆԵԼԷ

Իզական սեռի:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ի՞նչ բանի վրայ էք:

ՆԵՆՆԵԼԷ

Ո՛հ, դու հո՛ն էիր: Անգղիերէն սորվեցնե-  
լու համար քերականութիւնը կը սերտեմ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Իտալերէն կը սորվեցնես:

ՆԵՆՆԵԼԷ

Չէ, զաղղիերէն:

ՄԱՔՍԻՄՈՍ

Եւ անգղիերէնը զաղղիերէն սորվեցնելու  
համար, իտալերէն քերականութիւնը կը  
սերտես:

ՆԵՆՆԵԼԷ

Վասն զի խօսիլ գիտեմ: Ինչ որ ինծի կը պակհի, սկզբունքներն են: Գիտնալու է թէ որոնք են այն բաները որ ամէն լեզուներու մէջ նոյն են: կը հասկնանս:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ոչ:

ՆԵՆՆԵԼԷ

Անցած օր այնպէս ամօթով մնացի որ: Այն անգղիերէն գօսին որ ինծի գօտար, Ռուբլլէ այրիին որդին:

ՄԱՔՍԻՄՈՍ

Հոն գնացիր:

ՆԵՆՆԵԼԷ

Ապրուստս վաստկիլը ինծի հաւատալի չէր երեւար:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ապրուստը մեծ բան է:

ՆԵՆՆԵԼԷ

Անտանելի տեղ մը: Ճամբան, տունը, սանդուղը, սեննակները, սուրբ հարց լիմպորը: Եւ հեռու: Տեղատարափ կ'անձրուէր: Ամենուրեք լիճեր: Աղէկ որ թոմի հետս էր:

ՄԱՔՍԻՄՈՍ

Որպէս զի երկուքնիդ ալ թըլիք:

ՆԵՆՆԵԼԷ

Կառք մը բանց:

ԹՈՄՍ

Այդ բաները Մաքսիմոսի մի ըսեր, կը զլստանայ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ինծի: Բնդհակառակն: Հրապարակին մէջ կառքերուն զործը ի՞նչ է:

ՆԵՆՆԵԼԷ

Կը հասնիմ: Թոմի զիս կը բարեւէ: Սանդուղէն առիարիափ վեր կ'ելլամ: Սրտի բարտիւն մը ունէի որ: կը զարնեմ: Այրին անձամբ կու գայ բունդու:

ՄԱՔՍԻՄՈՍ

Ի՞նչ է այնչափ կը գառնաս այն այրիին վրայ: Իրեն երիկը ինքը չսպաննեց:

ՆԵՆՆԵԼԷ

Անիկայ տիպար այրին է: Մենդենէն: Թոմը չափազանցութեամբ երեսը զարնելով: Նէննէլէ: Տիկին մը որ քեզի կը վճարէ:

ՄԱՔՍԻՄՈՍ Իրեն կը նայի, ետքը Նէննէլէի:

Առաջ երթամք:

ՆԵՆՆԵԼԷ

Այրին... ներէ... տիկինը, կը տանի զիս տեսակ մը ճաշարանի մէջ, ուր կերակուր

կ'ուտեն, վասն զի կարամբ կը հօտէր, և զիս վերէն ի վար կը զննէ... կերպարանքով մը: Ետքը տարիքս կը հարցնէ:

ՄԱՔՍԻՄՈՍ

Այ:

ՆԵՆՆԵԼԷ

Ինչո՞ւ համար:

ՄԱՔՍԻՄՈՍ

Չքեզ եղածէդ աւելի ծեր ըրեր էի: Երիտասարդութիւնդ կրնար արգելք մը ըլլալ:

ՆԵՆՆԵԼԷ

Ապրիս: Աղէկ որ իմացուցիր: Քիչ մնաց որ կուր ընէիք: Ինքը 26 տարի կու տար ինծի, ես կը պնդէի իմ 22իս վրայ: Չերկնցընեմ, կը կանչէ զաւակը:

ԹՈՄՍ


Որքը:

ՆԵՆՆԵԼԷ

Որուն անունը կասցուն է: Տասնըվեց տարուան խնձոտ խալցիկ մը: Եւ կասցուն կ'երեւայ: Ես իմ Օլէնտորֆու կը բանամ ստուին վրայ և սկսելու վրայ կ'ըլլամ: Եւ մայրը կ'ելլայ կը նստի զուկին քով և երեսիս աչքերը կը տնկէ իրբու շփոթելու համար զիս: Ես կը սկսիմ գաղղիերէն նախագատութիւն մը ըսել, անիկայ անգղիերէնի կը թարգմանեմ և կասցունի կրկնել կու տամ: Բայց նա, նա քերականութիւնը, կանոնները, սահմանները կ'ուզէր: Տանջանք մը: Ակնթարթով մը իմ տղիտութեանս անդունդը չափեցի: Գիտեմ ինչ զիս բանց փախչելէն: Մուծ սանդուղին զաղափարը, ուսկից վար չէի կրնար լիջնալ վազելով: Ուրիշ բան չկար բայց ըսածին հոգ չընէի և շարունակը անվեհէր, վարժապետիս գնելիսը, մօրաքոջս զլիարկը, մերձատրին հովանոցը...

Թարգմ. Ն. ԱՐԻՍՅԱԿԻՑ ԲԱՅԳԱՏՅԱՆԵԱՆ

Շարայայրեցի



**ԳՈՒԹԱՆ** հանդէս ամսեայ հրատարական, արուևուտական. — « Գուծան օր կը հրատարակուի աւայժմ ամիսն անգամ մը: Բաժանորդագրութիւնն է՝ արտասահմանի համար՝ 12 ֆր. Տարեկաստանի՝ 10 ֆր. Թուսից 6 րուպիի. Ամերիկայի՝ 3 տղար, Տարեկաստանի ուսուցիչներու եւ ուսանողներու: (հաստատական վկայագրերով)՝ 6 ֆր: Մուտք ունի ամէն երկիր: Կիսով խմբաբուծական. K. MÉDZADOURIAN 23 Rue de la Collégiale PARIS